ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

…… 2021թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և ‹‹Նորմատիվ իրավական ակտերի մասին›› օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի ‹‹Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ›› N 315-Ն որոշման հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 11-30-րդ կետերով՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
,,____,, _____2021թ.
N _____-Ն որոշման

11	Աջափնյակ	01-001-0554-024	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Արդյունաբերական օբյեկտներ	Հասրաթյան փողոցի հ.29/5	
12	Աջափնյակ	01-001-109-774	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Մազմանյան փող հ.1/10	
13	Արաբկիր	01-003-003-051	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Փափազյան 2-րդ նրբ. հ.115/5 հասցեին կից	
14	Արաբկիր	01-003-324-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Քանաքեռ ՀԷԿ՝ ջրամբարի հարևանությամբ	
15	Արաբկիր	01-003-1205-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Քանաքեռ ՀԷԿ՝ ջրամբարի հարևանությամբ	
16	Արաբկիր	01-003-0136-0138	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Սուրբ Աբգար Թագավորի փող հ.73/4	
17	Դավթաշեն	01-004-110-519	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Դավթաշեն 3-րդ թաղ. հ.7/15	
18	Էրեբունի	001-005-579-016	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Արցախի պողոտա հ.75/4	
19	Էրեբունի	001-005-1463-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Վարդաշեն 11-րդ փող հ.29/6	
20	Մալաթիա Սեբաստիա	01-007-188-022	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Գ.Շերամի փող. հ.84/1	
21	Նոր Նորք	01-008-506-778	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Մոլդովական փող. հ.39/29	
22	Նորք- Մարաշ	01-009-0090-0583	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արմենակյան փողոցի հ.84 հասցեին կից	
23	Նորք-Մարաշ	01-009-1179-0001	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արմենակյան փողոցի հ.84 հասցեին կից	
24	Նուբարաշեն	01-010-120-002	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Նուբարաշեն 13-րդ փող հ.1/1	

25	Նուբարաշեն	01-010-218-003	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Նուբարաշեն Բ-2 թաղ. հ.15/1	
26	Շենգավիթ	01-011-392-160	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Արդյունաբերական օբյեկտներ	Մասիսի փող անցուղի հ.10/6	
27	Շենգավիթ	01-011-439-150	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Արտաշատի խճուղի հ.134	
28	Շենգավիթ	01-011-554-120	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 28-րդ փող. հ.13	
29	Շենգավիթ	01-011-681-038	Բնակավայրերի	Խառը կառուցապատում	Նիզամու փող. հ.54	
30	Շենգավիթ	01-011-494-0064	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Նորագավիթ 13-րդ փող հ.13 հասցեին կից	

»:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.	**Խնդրի սահմանումը**
	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշված են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:
2.	**Առկա իրավիճակը**
	Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով արդեն իսկ հաստատվել են օգտագործման տրամադրման և օտարման համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր: Երևանի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 315-Ն որոշման հավելվածի 44-րդ կետով 2021 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում ներառվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2020 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը: Միաժամանակ ցանկում չներառված հողամասերի ծածկագրերը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտության դեպքում այն օգտագործման տրամադրել կամ օտարել:
3.	**Կարգավորման նպատակը**
	Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ լրացում կատարելու արդյունքում հնարավոր կլինի 2021 թվականի օգտագործման տրամադրման և օտարման համար առաջարկվող հողամասերի ցանկը լրացնել նոր միավորներով:

4.	**Ակնկալվող արդյունքը**
	Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ լրացում կատարելու արդյունքում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի կներառվեն դեռևս չօտարված և օգտագործման չտրամադրված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը, որոնց օգտագործման տրամադրման և օտարման արդյունքում կավելանա Երևան համայնքի բյուջեի մուտքերը:
5.	**Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը**
	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ